ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 29 -Ա

ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 30-րդ հոդվածով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1287-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 9-րդ, 26-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 9-րդ հավելվածի 20-րդ կետը և Աղվան Հարությունյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Աղվան Հարությունյանին 2026 թվականի փետրվարի 26-ից 27-ը ներառյալ տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած 2 աշխատանքային օրը:
2. Աղվան Հարությունյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարումը վերապահել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Սրբուհի Դավթյանին:
3. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Գվիտոն Դավթյանին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:
4. Հաշվապահին՝ վճարել լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար:
5. Աղվան Հարությունյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի մարտի 2-ից:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2026թ. փետրվարի 6
ք. Եղեգնաձոր